Նարինե Մարտիրոսյան, *տ.գ.թ., ասիստենտ*
ՀՊՏՀ

ԴՐԱՄԱԿԱՆ ՀՈՍՔԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող արտադրական կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության հաջողությունը պայմանավորված է դրամական միջոցներ կենտրոնացնելու և դրանք արդյունավետ օգտագործելու կարողությամբ: Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվության կազմման նպատակով գործնականում օգտագործվում են ուղղակի և անուղղակի մեթոդները, որոնց միջև հիմնական տարբերությունը դրսևորվում է գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքերի որոշման ընթացակարգերի տարբերության մեջ:

Ուղղակի մեթոդի կիրառման դեպքում հաշվետվության մեջ բացահայտվում են կազմակերպության դրամական միջոցների մուտքերի և ելքերի բացարձակ գումարները, այս մեթոդը գրանցում է համախառն դրամական հոսքերը: Ուղղակի մեթոդի առավելությունն այն է, որ հնարավորություն է տալիս գնահատել կազմակերպության դրամական միջոցների ներհոսքերի և արտահոսքերի ընդհանուր մեծությունը, տեսնել այն հոդվածները, որոնք ձևավորել են ներհոսքերի ու արտահոսքերի գերակշիռ մասը գործունեության երեք տեսակների կտրվածքով: Այս մեթոդի կիրառման արդյունքում ձևավորված տեղեկատվությունն օգտակար է դրամական հոսքերի կանխատեսման համար[1]:

Ուղղակի մեթոդով դրամական միջոցների վերլուծությունն հնարավորություն է տալիս գնահատել կազմակերպության իրացվելիության մակարդակը, քանի որ մանրամասն ներկայացվում է դրամական միջոցների շարժը կազմակերպության հաշիվներում և թույլ է տալիս եզրահանգումներ կատարել դրամական միջոցների բավարարության վերաբերյալ՝ ընթացիկ պարտավորությունների մարման, ներդումներ իրականացնելու և լրացուցիչ այլ ծախսերի առնչությամբ: Այս մեթոդով վերլուծությունը հնարավորություն է տալիս գնահատել.

- դրամական միջոցների ստացման աղբյուրները և ծավալները, ինչպես նաև սովորական գործունեության իրականացման ընթացքում դրանց օգտագործման ուղղությունները,
- ներդրումային գործունեություն իրականացնելու համար կազմակերպության

[1] htpp://www.finkredit.com/analiz18.html

սեփական միջոցների բավարարության մակարդակը,

- ֆինանսական գործունեության շրջանակներում լրացուցիչ փոխառու միջոցներ ներգրավելու անհրաժեշտությունը,
- ընթացիկ պարտավորությունների՝ լրիվ ծավալով և ժամանակին մարման հնարավորությունները, արտադրանքի իրացման և դրամական միջոցների ստացման միջև փոխկապակցվածությունը:

Այսպիսով, ուղղակի մեթոդով դրամական հոսքերի վերլուծության շնորհիվ կարելի էպատկերացում կազմել կազմակերպության դրամական միջոցների արտահոսքերի և ներհոսքերի ընդհանուր մեծության, դրանցում գործունեության տեսակների մասնակցության չափի մասին: Այս ամենով հանդերձ նշված մեթոդը ունի էական թերություն. այն հնարավորություն չի տալիս վերլուծել կազմակերպության գործունեության ֆինանսական արդյունքների և դրամական միջոցների մնացորդի փոփոխության փոխկապակցվածությունը[2]: Այդ նպատակով կիրառվում է դրամական հոսքերի վերլուծության անուղղակի մեթոդը: Ուղղակի մեթոդը հաշվի է առնում միայն այն գործառնությունները, որոնք անմիջականորեն կապված են դրամական միջոցներն հաշվառող հաշիվներում տեղի ունեցող փոփոխությունների հետ, իսկ անուղղակի մեթոդով վերլուծական աշխատանքներում ներգրավվում են նաև այն գործընթացները, որոնք մասնակցում են կազմակերպության գործունեության ֆինանսական արդյունքների ձևավորման գործում՝ միևնույն ժամանակ ազդեցություն չունենալով դրամական միջոցների ծավալի վրա. Խոսքը վերաբերում է զուտ շահույթը ճշգրտելու ճանապարհով դրամական միջոցների մնացորդի փոփոխությունը գնահատելուն:

Եթե դատենք տեսականորեն, ապա հաշվետու ժամանակաշրջանում կազմակերպության զուտ շահույթը պետք է համապատասխանի դրամական միջոցների մնացորդի աճին: Մինչդեռ հաշվապահական հաշվառման վարման և հաշվետվությունների կազմման պրակտիկայում այդ ցուցանիշների հաշվարկման մեթոդիկայի տարանջատումը առաջացնում է դրանց միջև նշանակալի տարբերություններ: Հաշվանցման սկզբունքով հաշվարկված շահույթից դրամարկղային սկզբունքով շահույթին անցումը ցույց տանք բանաձևային տեսքով.

Հաշվանցման սկզբունքով հաշվարկված շահույթ (Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն) + ոչ դրամային ծախսեր +/- ընթացիկ ակտիվների, ընթացիկ պար-

[2] Åôèíîâà Î. Â., Ôèíàíñîâûé àíàëèç, 2-å èçä., Ì.: Èçä-âî «Î Ì ÅÃÀ-Ë», 2010, 94ñ.

տավորությունների փոփոխություն = Շահույթ՝ դրամարկղային սկզբունքով:

Անուղղակի մեթոդով հաշվարկը սկսվում է շահույթից (ոչ թե դրամական միջոցներից) և այն ճշգրտվում է ոչ դրամային ծախսերով, ինչպես նաև գործող կապիտալի հոդվածների փոփոխությամբ: Ի տարբերություն ուղղակի մեթոդի՝ անուղղակի մեթոդի դեպքում դիտարկվում են ոչ միայն դրամական միջոցներին վերաբերող հոդվածները, այլև ակտիվային, պասիվային բոլոր մնացած հոդվածները, որոնց փոփոխությունը ինչ-որ չափով ազդեցություն է ունենում դրամական միջոցների շարժի վրա:

Անուղղակի մեթոդով դրամական հոսքերի վերլուծությունը հնարավորություն է տալիս կապակցել կազմակերպության գործունեության տարբեր տեսակները և պարզել հարաբերակցությունը զուտ շահույթի և հաշվետու ժամանակաշրջանում հաշվեկշռի ակտիվում ու պասիվում փոփոխությունների միջև: Անուղղակի մեթոդը բացահայտում է այն գործոնները, որոնք պայմանավորում են դրամական միջոցների մնացորդի և զուտ ֆինանսական արդյունքի տարբերությունը: Այն ենթադրում է ստացված շահույթի ճշգրտում, ինչը նշանակում է, որ այն գործառնությունները, որոնց գծով ստացվել է շահույթ, բայց դրամական ներհոսք չի գրանցվել, ապա այդ գումարի չափով նվազեցվում է շահույթի գումարը (կատարվում է բացասական ճշգրտում), իսկ այն դեպքում, երբ հաշվարկվել են ծախսեր, որոնց գծով իրականում դրամական միջոցների արտահոսք չի գրանցվել (օրինակ, ամորտիզացիոն մասհանումները), ապա համապատասխան գումարով ավելացվում է շահույթի մեծությունը (կատարվում է դրական ճշգրտում): Այլ կերպ ասած՝ վերահաշվարկներն իրականացվում են որպիսի այն ծախսային հոդվածները, որոնք չեն ուղեկցվում դրամական միջոցների արտահոսքով և այն եկամուտները, որոնք չեն արտահայտվում դրամական միջոցների մուտքագրմամբ, ազդեցություն չունենան զուտ շահույթի մեծության վրա:

Վերահաշվարկներ իրականացնելու անհրաժեշտությունը կապված է՝

1. եկամուտներն ու ծախսերը հաշվապահական հաշվառման մեջ արտացոլելու և դրամական միջոցների հոսքերի առաջացման ժամանակային տարբերության հետ: Այդպիսի օրինակ է հետագայում որոշակի ապրանքների առաքման հիմունքով ստացված կանխավճարները, այս դեպքում առկա է դրամական միջոցների ներհոսք, մինչդեռ դա չի անդրադարձել ֆինանսական արդյունքների

վրա: Տվյալ դեպքում անհրաժեշտ է հաշվետու ժամանակաշրջանի շահույթի մեծությունը ավելացնել ստացված գումարի չափով:

2. Այնպիսի տնտեսական գործառնությունների հետ, որոնք առաջացնում են դրամական միջոցների շարժ՝ անմիջական ազդեցություն չունենալով զուտ շահույթ ցուցանշի վրա: Մասնավորապես, ձեռքբերված հումքի, նյութերի դիմաց վճարումը և դրան համապատասխան նյութական ընթացիկ ակտիվների մնացորդի աճը անհրաժեշտություն է առաջացնում ճշգրտել զուտ շահույթը: Նյութական ընթացիկ ակտիվների մնացորդի աճի դեպքում պետք է զուտ շահույթի գումարը նվազեցնել այդ չափով, իսկ հակառակ դեպքում՝ ավելացնել: Կարճաժամկետ պարտավորությունների ճշգրտման ժամանակ դրանց աճի դեպքում պետք է ավելացնել զուտ շահույթի մեծությունը, քանի որ դա չի նշանակում դրամական միջոցների արտահոսք: Նշված պարտավորությունների նվազման դեպքում համապատասխան չափով պետք է պակասեցնել զուտ շահույթի գումարից:

3. Այնպիսի տնտեսական գործառնությունների հետ, որոնք անմիջական ազդեցություն են ունենում շահույթի վրա, բայց չեն առաջացնում դրամական միջոցների շարժ: Ոչ դրամային գործոն է ոչ ընթացիկ նյութական և ոչ նյութական ակտիվների մաշվածությունը, վերջինիս առնչությամբ պետք է ճշգրտել շահույթի մեծությունը՝ ավելացնելով համապատասխան գումարով[3]:

Անուղղակի մեթոդով դրամական հոսքերի վերլուծության ընթացքում անհրաժեշտ է ճշգրտել զուտ շահույթը պաշարների, դեբիտորական պարտքերի, կրեդիտորական պարտքերի, կարճաժամկետ ֆինանսական ներդրումների և այլ հոդվածների փոփոխության գումարով: Անհրաժեշտ է բացառել նաև գործառնական գործունեությանը չառնչվող գործունեության (օրինակ ոչ ընթացիկ ակտիվների, այլ կազմակերպության արժեթղթերիվաճառք) արդյունքում ստացված ֆինանսական արդյունքները [4]:

Այն դեպքում, երբ հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքը վնաս է լինում, ապա հաշվարկի հիմք է ընդունվում վնասի մեծությունը: Հնարավոր է, որ վերահաշվարկների արդյունքում գործառնական գործունեությունից դրամական միջոցների շարժի վերջնական արդյունքը դրական դրսևորում ստանա: Հետևաբար, անուղղակի մեթոդի դեպքում հետազոտությունը տարվում է ըստ գործունեության ոլորտների, ինչը հստակորեն արտացոլում է, թե

---

[3] Êàíêå À. À., Êîøàêâàÿ È. Ï., Àíàëèç ôèíàíñî-õîçÿéñòâåííîé äåÿòåëüíîñòè ïðåäïðèÿòèÿ, 2-å èçä., Ì .:ÈÄ «ÔÎÐÓÌ» ÈÍÔÐÀ- Ì , 2007ã., 246ñ.

[4] Áàíê Â. Ð., Áàíê Ñ. Â., Òàðàñêèíà À. Â., Ôèíàíñîâûé àíàëèç, Ì .: ÒÊ Âåëáè, Èçä-âî Ïðîñïåêò, 2006ã., 189ñ.

հատկապես գործունեության որ տեսակի արդյունքում է ձևավորվել շահույթը և որտեղ են ներդրված այսպես կոչված «կենդանի փողերը»: Այս մեթոդի կիրառման ժամանակ ուսումասիրվում է «Համախմբված ֆինանսական արդյունքների մասին» հաշվետվությունը ներքևից վերև, իսկ ուղղակի մեթոդի դեպքում՝ վերևից ներքև[5]:

Հաշվարկները մասնավորապես հիմնված են զուտ շահույթի, ամորտիզացիոն մասհանումների, ինչպես նաև կազմակերպության ակտիվում և պասիվում փոփոխությունների վրա: Պասիվային հոդվածների աճի դեպքում դրական ուղղվածությամբ դրամական հոսքերը ավելանում են, իսկ ակտիվային հոդվածների աճի դեպքում՝ կրճատվում[6]:

Հարկ է նշել, որ գրականության մեջ որոշ հեղինակներ անուղղակի մեթոդով վերլուծության իրականացման ընթացքում հիմք են ընդունում զուտ շահույթի մեծությունը մինչ հարկումը, իսկ հեղինակների մեկ այլ խումբ՝ զուտ շահույթը հարկումից հետո:

Այսպիսով, ի տարբերություն ուղղակի մեթոդի, դրամական միջոցների շարժի հաշվետվության կազմման անուղղակի մեթոդը ենթադրում է ոչ միայն դրամական միջոցների հոդվածների, այլ նաև ակտիվների և պարտավորությունների մնացած բոլոր հոդվածների վերլուծություն, որոնց փոփոխությունը ազդում է կազմակերպության ֆինանսական հոսքերի վրա: Անուղղակի մեթոդի դեպքում ֆինանսական արդյունքը ձևավորվում է ընթացիկ գործունեությունից զուտ դրամական միջոցների մեծության չափով մի շարք ճշգրտող գործընթացների օգնությամբ: Ներդրումային և ֆինանսական գործնեություններից ֆինանսական հոսքերը, սովորաբար, արտացոլվում են ուղղակի մեթոդով:

---

[5] Бочаров В. В., Финансовый анализ, Краткий курс, 2-е изд.-СПб.: Питер, 2009 г., 110 с.

[6] Ñàâ÷óê Â. Ï., Óïðàâëåíèå ôèíàíñàìè ïðåäïðèÿòèÿ, 2-å èçä., Ì.: ÁÈÍÎÌ. Ëàáàòîðèÿ çíàíèé, 2005, 47ñ.

АННОТАЦИЯ

Нарине Мартиросян, *к. э. н.*
АГЭУ

ОЦЕНКИ ДЕНЕЖНЫХ ПОТОКОВ

Для подготовки отчета о движении денежных потоков используются прямые и косвенные методы. Основное различие между методами отражено в разнице определения процедур денежных потоков от операционной деятельности. Под прямым методом анализа денежных потоков можно понять размер оттока и притока денежных средств организации, а так же масштабы видов деятельностей в них. Однако метод имеет существенный недостаток. Он не дает возможности анализировать корреляцию между финансовым результатом и изменением остатка денежных средств компании. Для этого используется косвенный метод анализа движения денежных средств. При этом методе финансовый результат формируется из текущих операций в размере чистых денежных потоков с помощью ряда процессов.

ANNOTATION

Narine Martirosyan, *Doctor of Economics*
ASUE

CASH FLOW ESTIMATES

For the preparation of cash flow statement direct and indirect methods are used. The main difference between the methods is reflected in the difference of procedures of cash flows from operating activities. A direct method of cash flow analysis helps to understand the size of the outflow and inflow of funds the organization as well as being the scale of activities in them. However, the method has a major drawback: It makes it impossible to analyze the correlation between financial performance and changes in the cash balance of the company. For this we can use an indirect method of cash flow analysis. With this method, the financial result is formed from the current operations in the amount of net cash flows through a series of processes.